

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 18-ին Մերձմոսկովյան Զագորսկի Ս. Երրորդության-Սերգիևսկի վանքում տեղի ունեցավ Սովետական Միությունում գործող Եկեղեցիների ու կրոնական այլ հարանվանությունների պետերի ու ներկայացուցիչների հավաք՝ նվիրված ՍՍՀՄ-ի կրոնական համայնքների անցնող տարվա խաղաղասիրական գործունեությանը: Սույն հավաքին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, իր բարձր մասնակցությունը բերեց նաև Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նորին Սուրբ Օծությանը այս առիթով ուղեկցում էր Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Նոյեմբերի 17-ին, երկուշաբթի օրը, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթեց Մայր Աթոռի ողջ միաբանությունը, ի գլուխ ունենալով Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանին:

Նորին Սուրբ Օծությանը ճանապարհելու էր եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը, տեղակալներ տիար Ա. Հասրաթյանն ու տիար Ռ. Զարգարյանը:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայան, ուր Նորին Սուրբ Օծությանը, հանուն Ռուս Պրավոսլավ Եկեղեցու, բարիգալստյան ջերմ խոսք ասաց Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ Տ. Իով եպիսկոպոսը:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեց նաև Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Նորին Սուրբ Օծությանը բարի գալուստ մաղթելու համար օդանավակայան էր ժամանել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի ներկայացուցիչ տիար Ս. Կուլնեցովը:

Վեհափառ Հայրապետը իր ուղեկիցներով ուղևորվեց Մոսկվա, ուր իջևանեց «Սովետսկայա» հյուրանոցում:

Հաջորդ օրը, նոյեմբերի 18-ին, Նորին Սուրբ Օծությունը, ուղեկցությամբ Տ. Անանիա եպիսկոպոսի և Տ. Տիրան վարդապետի, մեկնեցավ Զագորսկ՝ մասնակցելու կրոնական պետերի և հարանվանությանց ներկայացուցիչների հավաքին, որին մասնակցում էին Մոսկվայի և համայն Ռուսիոց Պատրիարք Պիմենը, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը, Միջին Ասիայի և Ղազախստանի, Անդրկովկասի մահմեդական համայնքների, Ավետարանական-բողոքական, բուդդայական և հրեական համայնքների հոգևոր պետերը:

Հավաքը բացեց Մոսկվայի և համայն Ռուսիոց Տ. Պիմեն Պատրիարքը: Խոսելով ներկա ժողովի գումարման նպատակների մասին, Նորին Սրբությունը իր գոհունակությունը հայտնեց այն առթիվ, որ ՄԱԿ-ի կողմից հայտարարված Խաղաղության տարին՝ 1986 թվականը, իսկապես մեր երկրագնդի համար իր ամբողջական իմաստով եղավ խաղաղ: Այդ բանին մեծապես նպաստեց, նշում է Պիմեն Պատրիարքը, սովետական կառավարության բռնած խաղաղասիրական դիրքը: Ի մասնավորի Նորին Սրբությունը նշեց այն փաստը, որ ՍՍՀՄ-ը մոտ մեկ ու կես տարվա ընթացքում ոչ մեկ

միջուկային փորձարկում չի կատարել երկրի վրա:

Այնուհանդերձ, նշեց Պիմեն Պատրիարքը, աշխարհը դեռ խոցվահույլ է:

Ռեյկյավիկի հանդիպումից հետո մենք գտնվում ենք դեռևս անորոշ կացության առջև, որով և Ռուս Եկեղեցու գլուխը կոչ արեց բոլոր ներկաներին՝ միացնելու իրենց ջանքերն ու եռանդը խաղաղության պայքարի գործում, որպեսզի երբեք աշխարհի վրա չկախվի ոչնչացման սպառնալիքը:

Տ. Պիմեն Պատրիարքի ողջույնի խոսքից հետո խոսքը տրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին:

Իր հակիրճ և բովանդակալից խոսքում Հայոց Հայրապետը նախ իր գոհունակությունը հայտնեց Պիմեն Պատրիարքի եղբայրական հրավերի համար, քանի որ, ինչպես նշեց Նորին Սուրբ Օծությունը, «Անհրաժեշտ էր իրոք այս հանդիպումը նոր կարգացումների լույսի տակ, մանավանդ Ռեյկյավիկի ժողովից հետո»: Վեհափառ Հայրապետը Ռեյկյավիկի բարձր մակարդակի հանդիպումը կարևոր մի հանգրվան նկատեց ոչ միայն սովետա-ամերիկյան հարաբերությունների ճանապարհին, այլ նաև միջազգային կյանքում աշխարհի խաղաղությունը պահպանելու ի խնդիր:

«Ռեյկյավիկը,—ասաց Վեհափառ Հայրապետը,—ըստ իս վերջապես հաստատեց մանավանդ երկու իրողություն.

ա. որ ընդհանուր զինաթափումը հնարավոր է և անհրաժեշտ:

բ. որ սովետական մեր կառավարությունը անվիճելիորեն անկեղծ է, համարձակ է, արդար է»:

Վեհափառը հույսով ընդգծեց, որ Սովետական Միության ղեկավարը Ռեյկյավիկում և անմիջապես հետո հեռուստացույցից իր հայտարարություններով աշխարհի առաջ հանդես եկավ իբրև մի պետական գործիչ, որ ծանրորեն ապրում է, տառապում մեր աշխարհի ողբերգությամբ, իբրև հետևանք անսանձ սպառազինումների, որոնք սպառնում են մեր երկրագնդին ու երկնքին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հավատիացրեց բոլոր ներկաներին, որ Հայ Առաքելական Եկեղեցին խաղաղության դատի պաշտպանության հարցերում, ինչպես նաև զինաթափման և ապգությունների համերաշխ գործակցության խնդիրներում բոլոր Եկեղեցիների ու կրոնական համայնքների կողքին կաշխատի սրանից հետո ևս կատարել իր պարտքը: Այդ է վկայում արտասահմանում գործող հայ գաղութների կյանքը, «ուր ավելի քան երկու միլիոն հայեր, իրենց հարյուրավոր եկեղեցիներով, դպրոցներով ու մշակութային, հայրենասիրական կապակցություններով հոգևոր կապված են Ս. Էջմիածնին և մեր մայր հայրենիք Սովետական Հայաստանին»:

Վեհափառ Հայրապետը ներկաներին հակիրճորեն պատմեց արտասահմանի հայ գաղութների ներքին կյանքի մասին, որ նրանք իրենց բոլոր հաղորդակցական միջոցներով (թերթ, շաբաթաթերթ, ամսագիր և այլն) ջերմորեն արձագանքում են Վեհափառ Հայրապետի և Ս. Էջմիածնի հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությանը:

Իր խոսքի վերջում Նորին Սուրբ Օծությունը առաջարկեց չգոհանալ այսօրվա ժողովի որոշումներով, այլ հետագայում, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հրավերով, կազմակերպել համաշխարհային մի վեհաժողով, որին կմասնակցեին աշխարհի շատ երկրներից ժամանած հոգևորականներ, և որն, անշուշտ, օգտակար մի ձեռնարկ կհանդիսանար խաղաղության և ժողովուրդների համերաշխ գործակցության ճանապարհին: Վեհափառ Հայրապետի առաջարկը կարևոր արձագանք ունեցավ:

Վազգեն Վեհափառը իր խորին գոհունակությունը և գնահատանքը հայտնեց Հռոմի Սրբազան Պապի հրավերով Ասիզում համատեղ աղոթքի առթիվ, որին մասնակցել էր Հայ Եկեղեցու անունից Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոսը: Ապա Նորին Սրբությունը նկատել տվեց, որ Ասիզում իր երեք ճառերի մեջ Սրբազան Քահանայապետը ոչ մի ձևով չէր անդրադարձել Ռեյկյավիկի հանդիպումին և այնտեղ ներկայացված սպառազինումների դադարեցման և ամբողջական զինաթափման առաջարկներին:

Վեհափառ Հայրապետը ավելացրեց, «Կարելի չէ, մեր օրերում խաղաղության մասին խոսել առանց խոսելու զինաթափման մասին, և թե չի կարելի զինաթափման մասին խոսել, առանց հիշելու Ռեյկյավիկում կատարված զինաթափման հատակ ու ճշգրիտ առաջարկությունները սովետական կառավարության»:

Նորին Սուրբ Օծությունից հետո խոսք առան հավաքի մի շարք մասնակից-ներկայացուցիչներ (Վրաց Եկեղեցու կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը, մահմեդական, Ռուս Պրավոսլավ, բուդդայական, բողոքական և այլն): Նրանք բոլորն էլ միահամուռ կերպով արտահայտեցին իրենց համայնքների և հավատացյալների կամքը՝ անշեղորեն ծառայելու խաղաղության պաշտպանության սուրբ գործին: Վերջում Պիմեն Պատրիարքի առաջարկով ժողովն ընդունեց աշխարհի կրոնական գործիչներին ուղղված կոչ, որն ավարտվեց հետևյալ սրտառուչ խոսքերով. «Մենք՝ Սովետական Միության Եկեղեցինե-

րի և կրոնական համայնքների պետերս ու ներկայացուցիչներս, կոչ ենք անում Ձեզ, սիրելի եղբայրներ ու քույրեր, հետագայում ևս բարձր աստիճանի վրա պահել ժողովուրդների միջև խաղաղության պաշտպանության և ամենասրբալան պարգևի՝ կյանքի պահպանման հարցերում Ձեր մտահոգությունն ու զգոնությունը, աջակցել պետություններին, կրոնական և հասարակական շրջանակներին՝ ընդհանուր և մանավանդ միջուկային զինաթափման հարցերում, արգելք հանդիսանալ տիեզերական տարածությունը զինվորական նպատակներով օգտագործելուն, նպաստել միջազգային տարաձայնությունները խաղաղ ճանապարհով լուծելուն:

Մենք կոչ ենք հղում Ձեզ՝ աղոթելու աշխարհի պետությանց ղեկավարների համար, որպեսզի նրանք իմաստությամբ, համբերատարությամբ և առնականորեն հետևեն խաղաղության և արդարության ճանապարհին:

Կոչ ենք հղում համագործակցության՝ ժողովուրդների միջև վախի և անվստահության արգելքների վերացման և նրանց միջև սերտ գործակցության հաստատման համար՝ ի բարօրություն երկրի վրա բնակվող ամեն մի մարդկային արարածի:

Թող խաղաղասիրության ոգին իջնի մարդկության վրա, թող հաստատվի միջազգային կարգուկանոնն ու անվտանգությունը բոլոր ժողովուրդների և տերությունների համար, թող բոլոր մարդկանց համար մարդուն վայել ապրելակերպը դառնա իրականություն»:

Նույն օրը ժողովն ավարտեց իր աշխատանքները: Ժողովի ավարտից հետո նրա մասնակիցների պատվին Տ. Պիմեն Պատրիարքի կողմից տրվեց ճաշկերույթ, որին ներկա էր ՍՍՀՄ կրոնական գործերի նախագահի տեղակալ Ե. Միկովանովը:

Նոյեմբերի 20-ին Վեհափառ Հայրապետը Մոսկվայից վերադարձավ Երևան:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը և տեղակալներ Ա. Հասրաթյանն ու Ռ. Զարգարյանը:

Վեհափառ Հայրապետի այցը Մոսկվա, Նրա մասնակցությունը խաղաղության պաշտպանությանը նվիրված սույն ժողովին մեկ անգամ ևս ապացույց հանդիսացավ Նորին Սուրբ Օծության և Ս. Էջմիածնի հայրենասիրական և խաղաղասիրական մեծ գործունեության:

ԱՆԱՆԻԱ ԵՊՍ. ԱՐԱԲԱՋՅԱՆ